ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 06/19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 01 հուլիսի 2019թ.

2019 թվականի հուլիսի 01-ին, ժամը 12:00-ին, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ «Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին» և «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի N 19-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշումների նախագծերի թեմաներով:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Արման Օհանյանը, անդամներ Արման Խանզադյանը, Արտյոմ Ավագյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը, համայնքի ղեկավարի խորհրդական, զարգացման հարցերով պատասխանատու Սարգիս Ղազարյանը, Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող, համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Զարուհի Ապրեսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1. Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի N 19-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին,

Համայքնի ավագանու որոշումների նախագծերի քննարկում:

Լ.Պողոսյանը ներկայացրեց Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքը: Գույքահարկի գծով վճարումներ կատարվել են 129.7 %-ով, հողի հարկի գծով՝ 115.4 %-ով, տեղական տուրքերի գծով՝ 100.5 % -ով: Հողի վարձակալությունից վճարները կազմել են

2383.4հազար դրամ՝ 80.6 %: Թերակատարում է առաջացել նաև Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց տեղական վճարների գծով՝ 93.6 %, իսկ «Բյուրեղավանի Շառլ Ազնավուր անվան արվեսի դպրոց» ԱՈՒՀ ՀՈԱԿ-ի վարձավճարների հավաքարումը կատարվել է 100 %-ով: Գյուղական բնակավայրերում աղբահանության վճարների հավաքագրման գծով դեռևս առկա են խոչընդոտներ: Աղբը ժամանակին հավաքվում է, սակայն բնակիչները աղբահանության վճարները կամ չեն մուծում, կամ մասամբ են մուծում: Հավաքագրումը կատարվել է 93.1 % -ով:

Ծախսերի գծով կատարողականը կազմել է՝ շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման գծով՝ 5.6 %, տրանսպորտային սարքավորումների գծով՝ 24.3 %, վաչական սարքավորումների գծով՝ 16.3 %, աճեցվող ակտիվների գծով՝ 77 %, իսկ նախագծահետազոտական ծախսերը կազմել են 1630,0 հազար դրամ՝ կազմելով 44.9 %:

Կից ներկայացվում է հաշվետվությունը:

Որոշվեց՝

հավանություն տալ «Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին» որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Սարգիս Ղազարյանը ներկայացրեց, որ հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2019 թվականի հունիսի 4-ի N01.1/08.2/03895-2019 գրությունը՝ անհրաժեշտություն է առաջացել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2018-2022 թվականների զարգացման հնգամյա ծրագիրը հաստատելու մասին» N 19-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարել: Առաջարկվում է ՀՀՋԾ-ում ընդգրկել «Բյուրեղավան համայնքի «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ի սանհանգույցների և թվայնացված հետազոտման սենյակի վերանորոգման աշխատանքներ» ծրագիրը, որի արժեքն է 9.600.000 դրամ և իրականացվել է 2019թ.-ին և «Բյուրեղավան համայնքի Նուռնուս բնակավայրի միջհամայնքային գլխավոր ճանապարհի քարաթափման վտանգի գոտի ունեցող հատվածում քարաթափման վտանգը կանխարգելող արգելապատնեշի կառուցում» ծրագիրը, որի արժեքն է 10.000.000 դրամ և նախատեսվում է իրականացնել 2021թ.-ին:

Որոշվեց՝

հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի N 19-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ Արման Օհանյան

Հանձնաժողովի անդամներ՝ Արման Խանզադյան

Արտյոմ Ավագյան

Բյուրեղավան համայնքի բյուջեի 2019թ. եկամուտների և ծախսերի
կատարողականը առ 01.07.2019թ. դրությամբ

N	Եկամուտի անվանումը	2019 թվականի հունիս			
		պլան	փաստ	կատ. %	շեղում
1	Եկամուտները, այդ թվում	146530,4	148950,6	101,7	2420,2
2	Հարկեր և տուրքեր , այդ թվում	15019,0	18876,3	125,7	3857,3
3	Գույքային հարկեր, այդ թվում	13869,0	17720,1	127,8	3851,1
4	Գույքահարկ շենքերի և շինությունների, փոխ.միջոցների համար	12010,0	15574,4	129,7	3564,4
5	Հողի հարկ	1859,0	2145,7	115,4	286,7
6	Տեղական տուրքեր, որից	1150,0	1156,2	100,5	6,2
16	Դոտացիա	105040,9	105040,9	100,0	0,0
17	Սուբվենցիա	1070,5	1070,5	100,0	0,0
18	Այլ եկամուտներ, որից	25400,0	23962,9	94,3	-1437,1
19	Հողի վարձակալությունից վճար	3700,0	2983,4	80,6	-716,6
20	Տեղական վճարներ	120,0	200,0	166,7	80,0
21	Մանկապարտեզի վճար	5760,0	5388,8	93,6	-371,2
22	Արվեստի դպրոցի վճար	4320,0	4321,0	100,0	1,0
23	Աղբահանության վճար	9300,0	8659,6	93,1	-640,4
24	Համայնքի վարչ. տարարծ. ինքն. կառ. շենք. և շինություն. օրինակ. համար վճար	1500,0	1693,1	112,9	193,1
25	Օրենքով և իրավ.այլ ակտերով սահման. այլ եկամուտներ	600,0	707,0	117,8	107,0
26	Վարչական տուգանք	100,0	10,0	10,0	-90,0
27	Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	18000,0	3058,7	17,0	-14941,3
28	Տարեսկզբի ազատ մնացորդ	41804,4	41804,4	100,0	0,0
29	Ընդամենը եկամուտներ	206334,8	193813,7	93,9	-12521,1
30	Սեփական եկամուտներ	40419,0	42839,2	106,0	2420,2
	Բ.Ոչ ֆինանս.ակտիվների գծով ծախսեր	105474,8	10473,5	9,9	-95001,3
31	*Շենքերի և շինությունների ձեռք բերում*	7000,0	0,0	0,0	-7000,0
32	*Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում*	70170,0	3935,7	5,6	-66234,3
33	*Տրանսպորտային սարքավորումներ*	6633,0	1614,8	24,3	-5018,2
34	*Վարչական սարքավորումներ*	6041,8	983,0	16,3	-5058,8
35	*Այլ մեքենաներ և սարքավորումներ*	8000,0	0,0	0,0	-8000,0
36	*Աճեցվող ակտիվներ*	3000,0	2310,0	77,0	-690,0
37	Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր	1000,0	0,0	0,0	-1000,0
38	*Նախագծահետազոտական ծախսեր*	3630,0	1630,0	44,9	-2000,0